ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2026 թվականի թիվ 170 - Ա

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՏՆՕՐԵՆ ՄԱՐՈ ՍԻՄՈՆՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՍՄԲԱՏ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՎՐԱ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով, 16-րդ հոդվածի 3-րդ մասի բ) ենթակետով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Մարո Սիմոնյանի հետ 2024 թվականի մայիսի 15-ին կնքած N25 աշխատանքային պայմանագրի 6.1 կետի «դ» ենթակետը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղարի 2026 թվականի հուլիսի 6-ի ԱՐՄ/ԺՍ-1-2/26383-2026 գրությունը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ.

1. Լուծել ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Մարո Սիմոնյանի հետ կնքած 2024 թվականի մայիսի 15-ի N25 ժամկետային աշխատանքային պայմանագիրը: Աշխատանքի վերջին օրը համարել 2026 թվականի հուլիսի 9-ը:

2. 2026 թվականի հուլիսի 10-ից ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը դնել նույն կազմակերպության գեղարվեստական մասի ղեկավար Սմբատ Առաքելյանի վրա:

3. ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության «Եղեգնաձորի մշակույթի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունում հանձնման-

ընդունման աշխատանքները կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

4. Հանձնաժողովի աշխատանքներին մասնակից դարձնել կազմակերպության նյութական պատասխանատու անձանց:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KHACHATRYAN ARSEN 3902800330

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ԿԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ

2026 թվական հուլիսի 8
ք. Եղեգնաձոր

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2026թ հուլիսի 8 -ի
N 140-Ա որոշման

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ՈՒՄ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՍՏԵՂԾՎԱԾ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝

Գվիտոն Դավթյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչությունում փորձագետ

Անդամներ՝

Հուսիկ Հարությունյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության գլխավոր մասնագետ
Աղասի Հովհաննիսյան	ՀՀ Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությունում փորձագետ